



Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (Արմստատ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Նախագահ՝ Ստեփան Մնացականյան



Ընդհանուր տեղեկություն

Հայաստանի Հանրապետությունում **պաշտոնական** վիճակագրությունը, օրենքով լիազորված մարմինների կողմից պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների պահանջներին համապատասխան, հանրային կյանքի էական և չափակցելի երևույթների թվային արտահայտությամբ մշակված, արտադրված և տարածված, **բացառապես վիճակագրական ծրագրերում արտացոլված վիճակագրությունն է**, որը ներկայացուցչական հիմքով նկարագրում է Հայաստանի Հանրապետության տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական երևույթները:

ՀՀ պաշտոնական վիճակագրության արտադրողներից բաղկացած ազգային վիճակագրական համակարգը ներառում է Արմատատին, որը ՀՀ վիճակագրական համակարգի գլխավոր պետական մարմինն է, ՀՀ կենտրոնական բանկին և պաշտոնական վիճակագրության այլ արտադրողներին:

Արմատատը բաղկացած է կենտրոնական ապարատից և 10 մարզային ու Երևան քաղաքի վարչություններից և ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեից:

Անվանումը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե (Արմատատ)

Կառավարման բարձրագույն մարմինը՝ ՀՀ վիճակագրության պետական խորհուրդ (ՀՀ ՎՊԽ)

Ղեկավարը՝ Արմատատի նախագահը, որը միաժամանակ հանդիսանում է ՀՀ ՎՊԽ նախագահ

Ղեկավարը և ՀՀ ՎՊԽ-ի մնացած 6 անդամները նշանակվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ 6 տարի ժամկետով:



Դիրքը պետական կառավարման համակարգում

Վարչական դիրքը. Արմատատը ՀՀ կառավարությանը ենթակա պետական մարմին է, որն իր լիազորություններն իրականացնելիս անկախ է, ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքով և այլ իրավական ակտերով:

Արմատատը որոշակի քաղաքական ուղղվածությամբ պետական ինստիտուտներից արմատապես տարբերվող պետական մարմին է: Քաղաքական, վարչական, գերատեսչական շահերի միջև առկա բախումներում պաշտոնական վիճակագրությունը չներքաշելու երաշխիքները սահմանված են պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներով:


Արմատատի աշխատակազմը միասնական համակարգ է, որն իր մեջ ներառում է գործառնական և տարածքային միավորներ: Անձնակազմի անդամները հիմնականում քաղաքացիական ծառայողներ են:

ՀՀ-ում պաշտոնական վիճակագրության **հիմքը** վիճակագրական ծրագրերն են: Հնգամյա և տարեկան ծրագրերը հաստատվում են ՀՀ ՎՊԽ կողմից և ֆինանսավորվում՝ ՀՀ պետական բյուջեից:

Արմատատի կառավարման բարձրագույն մարմինը 7 անդամից բաղկացած ՀՀ ՎՊԽ-ն է, որն իրավասու է ընդունելու վիճակագրության բնագավառին առնչվող նորմատիվ բնույթի իրավական ուժ ունեցող ակտեր:

ՀՀ ՎՊԽ-ի, Արմատատի նախագահի և պաշտոնական վիճակագրության այլ արտադրողների պաշտոնական վիճակագրության համար ռազմավարական նշանակություն ունեցող հարցերի մասով՝ հասարակական հիմունքներով գործող հիմնական խորհրդատվական մարմինը **Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների հանրային խորհուրդն է:**

Կարուցվածքը (ինտերակտիվ պատկեր)



Հասնաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ կետի՝ Վիճակագրության պետական խորհրդի անդամներն իրականացնում են հաստատարության բնագավառի համակարգումը:



Համառոտ պատմություն

1921թ. հոկտեմբերի 5-ին խորհրդային կարգերի հաստատումից գրեթե անմիջապես հետո, ՀԽՍՀ ժողովրդական Կոմիսարների խորհրդի որոշմամբ, ձևավորվել է Հայաստանի պաշտոնական վիճակագրությունը, իսկ 1922թ. հունվարի 7-ից սկսել է ծավալվել առաջին վիճակագրական մարմնի՝ ՀԽՍՀ վիճակագրական վարչության հիմնական գործունեությունը:

Մինչ 1990 թվականը Հայաստանի կենտրոնական վիճակագրության վարչության վիճակագրական աշխատանքն իրականացվել է ԽՍՀՄ կենտրոնական վիճակագրության վարչության անմիջական ղեկավարության ներքո:

ԽՍՀՄ փլուզումից հետո Արմատատի գործունեությունն անմիջականորեն իրականացվում էր ՀՀ կառավարության ուղղորդմամբ:

2000 թվականից Արմատատը ձեռք է բերել հանրային շահին ուղղված գործառույթներ իրականացնող պետական մարմնի կարգավիճակ, որն իր խնդիրներն իրականացնելիս անկախ է այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, իսկ 2018 թվականի ապրիլի 9-ից ուժի մեջ մտած «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի համաձայն՝ որպես ՀՀ կառավարությանը ենթակա, սակայն իր լիազորություններն իրականացնելիս անկախ պետական մարմնի կարգավիճակ:

2008 թվականի ապրիլի 29-ին ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի կազմակերպական նստաշրջանում ՀՀ-ն ընտրվել է ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի նոր անդամ: Անդամակցությունը 4 տարի ժամկետով էր՝ սկսած 2009թ. հունվարի 1-ից:

2015-2017թթ. համար Արմատատի նախագահն ընտրվել է Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի փոխնախագահ և կրկին վերընտրվել է երկու տարի ժամկետով՝ 2017թ. հունիսից մինչև 2019թ. հունիսը, 2019թ. նորից վերընտրվել է 2 տարի ժամկետով՝ 2019թ. հունիսից մինչև 2021թ. հունիսը:



Իրավական հիմքերը

«Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքն՝
ընդունված 21.03.2018թ.,

«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքն՝
ընդունված 23.03.2018թ.,

Վիճակագրական ծրագրերը.

- Հնգամյա ծրագիր (նորմատիվ գերատեսչական ակտ),
- Տարեկան ծրագիր (նորմատիվ գերատեսչական ակտ).

ՀՀ ՎՊԽ որոշումները և այլ ազգային ու վերազգային նորմատիվային ակտերը:

Վիճակագրական ծրագրի կազմման սկզբունքները.

- առկա ռեսուրսների սահմանափակումները,
- վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը,
- ծախսերի արդյունավետությունը,
- համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին,
- երկարաժամկետ միջակայքում կայուն պարբերականությունը,
- տարեկան կտրվածքով պաշտոնական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը,
- օգտագործողների պահանջարկի ուսումնասիրությունը:

(Պաշտոնական վիճակագրության մասին օրենքի 14-րդ հոդված)



Հիմնական գործառույթները

- պաշտոնական վիճակագրության մշակումը, արտադրությունը և տարածումը,
- ազգային վիճակագրական համակարգի գործունեության համակարգումը և միասնական փորձառության կիրառումը,
- միջազգայնորեն համաձայնեցված միատեսակ հասկացությունների, սահմանումների, դասակարգումների և մեթոդների կիրառման ապահովումը,
- վիճակագրական ծրագրերի թափանցիկ գործընթացներով կազմումը, հաստատումը, դրանց իրագործման նկատմամբ վերահսկողության իրականացումը, դրանց կատարման հաշվետվությունների հաստատումը և հանրությանը ներկայացումը,
- համատարած հաշվառումների կազմակերպումը,
- վիճակագրական ռեգիստրների ստեղծումը և վարումը,

-
- տվյալների տարածման նախնական օրացույցին համապատասխան պաշտոնական վիճակագրության տարածումը՝ օգտագործողների հավասար մատչելիության սկզբունքին համապատասխան,
 - վիճակագրական արտադրության բոլոր աղբյուրների և մեթոդների մասին, ինչպես նաև տարածվող վիճակագրական նյութերի որակի մասին մեթատվյալների տարածումը,
 - համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և ազգային վիճակագրական ծառայությունների հետ:



Հիմնական փաստաթղթեր

- ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքները
- Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգիրքը
- Վիճակագրական օրենսդրության մոդեռնիզացման ձեռնարկ (անգլերեն)
- Պաշտոնական վիճակագրության մոդելային օրենք Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի համար (անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն)
- Եվրոպական վիճակագրական համակարգի որակի հոշակագիրը
- Միջազգային վիճակագրական գործունեության կառավարման սկզբունքները (անգլերեն)
- Միջազգային վիճակագրական ինստիտուտի պրոֆեսիոնալ էթիկայի հոշակագիրը



Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքները

(ընդունված ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի 47-րդ նստաշրջանում՝ Ժնև, 15.04.1992թ. և ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի կողմից՝ 14.04.94թ. ու ՄԱԿ-ի Գլխավոր Վեհաժողովի կողմից՝ Նյու-Յորք, 29.01.2014թ., Բանաձև 68/261)

1. Նշանակալիություն, օբյեկտիվություն և մատչելիություն
2. Պրոֆեսիոնալ ստանդարտներ և էթիկա
3. Հաշվեմտություն և թափանցիկություն
4. Միալ օգտագործման կանխում
5. Պաշտոնական վիճակագրության աղբյուրներ
6. Գաղտնիություն
7. Օրենսդրություն
8. Ազգային համակարգում
9. Միջազգային ստանդարտների օգտագործում
10. Միջազգային համագործակցություն




Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքով սահմանված սկզբունքները

(ընդունված է Վիճակագրական ծրագրային կոմիտեի կողմից՝ 24.02.2005թ.,
Եվրոպական վիճակագրական համակարգի կոմիտեի կողմից՝ 28.09.2011թ. և 16.11.2017թ.
տե՛ս <https://www.armstat.am/file/doc/99508963.pdf> հղումը)

1. Պրոֆեսիոնալ անկախություն
- 1.1. Համակարգում և համագործակցություն
2. Մանդատ տվյալների հավաքագրման համար
3. Ռեսուրսների համապատասխանություն
4. Որակի հանձնառություն
5. Վիճակագրական գաղտնիություն
6. Անկողմնակալություն և օբյեկտիվություն
7. Հիմնավորված մեթոդաբանություն
8. Համապատասխան վիճակագրական ընթացակարգեր
9. Ռեսպոնդենտների չափավոր ծանրաբեռնվածություն
10. Ծախսերի արդյունավետություն
11. Համապատասխանություն
12. Ճշգրտություն և արժանահավաստություն
13. Յուրաժամանակություն և ճշտապահություն
14. Համաձայնեցվածություն և համադրելիություն
15. Մարտեղիություն և պարզություն:




Անձնակազմն ըստ մասնագիտությունների (որակավորման), 01.01.2020թ.






Անձնակազմն ըստ կրթական մակարդակի, 01.01.2020թ.

Ընդհանուր թվաքանակը՝ 314 անձ:






Իրականացված բյուջետային փաստացի ծախսերի կառուցվածքը, 2019





Տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածք Ցանցեր, Կայքեր և Աշխատանքային կայաններ





Պարբերաբար իրականացվող վիճակագրական հետազոտություններ

ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ.

1. Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն
2. Աշխատուժի հետազոտություն
3. Գյուղատնտեսության հետազոտություններ՝
 - բուսաբուծության
 - կենդանաբուծության
 - գյուղմթերքի ապրանքայնության
 - և այլն



Մարդահամար

Հայաստանի Հանրապետությունում առաջին ազգային մարդահամարն անց է կացվել

2001թ. հոկտեմբերի 10-ից -19-ը:

Մշտական բնակչություն - 3 213 011,

որից՝

քաղաքային - 2 066 153,

գյուղական - 1 146 858,

տղամարդ - 1 541 999

կին - 1 671 012

Առկա բնակչություն - 3 002 594

«Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի արդյունքները» ըստ հանրապետության, ք.Երևանի և առանձին մարզերի ցուցանիշներով հրապարակումները (թվով 12), հայերեն, ռուսերեն և անգլերեն

Հայաստանի Հանրապետությունում երկրորդ մարդահամարն անց է կացվել **2011թ. հոկտեմբերի 12-ից 21-ը:**

Մշտական բնակչություն – 3 018 854,

որից՝

քաղաքային - 1 911 287

գյուղական - 1 107 567

տղամարդ - 1 448 052

կին - 1 570 802

Առկա բնակչություն - 2 871 771

«Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի արդյունքները» ըստ հանրապետության (հայերեն, ռուսերեն և անգլերեն) և ք. Երևանի, առանձին մարզերի ցուցանիշներով հրապարակումները (թվով 11, հայերեն), էլեկտրոնային տարբերակներ:



Գյուղատնտեսական համատարած հաշվառում

Հայաստանի Հանրապետությունում առաջին գյուղատնտեսական համատարած հաշվառումն անց է կացվել 2014 թ. հոկտեմբերի 11-ից -31-ը ներառյալ:

2016թ. հոկտեմբեր-դեկտեմբերին իրականացվել են ԳՀՀ արդյունքների ամփոփման, ելքային աղյուսակների կազմման աշխատանքները, հրապարակվել, ինչպես նաև ՀՀ ՎԿ պաշտոնական կայքում զետեղվել է «Հայաստանի Հանրապետությունում 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները» վիճակագրական ժողովածուն (հայերեն, ռուսերեն և անգլերեն), որի շնորհանդեսը տեղի է ունեցել 2016թ. դեկտեմբերի 23-ին՝ Կոնգրես հյուրանոցի Շքասրահում:

ՀՀ ՎԿ պաշտոնական կայքում զետեղվել են նաև Երևան քաղաքի և ՀՀ բոլոր մարզերի (առանձին) «2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները» վիճակագրական ժողովածուները (հայերեն, անգլերեն):

Պաշտոնական կայքեր՝ <http://www.armstat.am> , <http://www.armstatbank.am>



Քաղաքականությունները

Որակի քաղաքականություն <https://www.armstat.am/am/?nid=25>

Տեղեկատվության տարածման և հաղորդակցության քաղաքականություն <https://www.armstat.am/file/doc/99509633.pdf>

Տեղեկատվության տարածման և հաղորդակցության ռազմավարություն <https://www.armstat.am/file/doc/99509643.pdf>



Վիճակագրական հրապարակումներ

- Վիճակագրական հրապարակումների համացանկ
- Ազգային ամփոփ տվյալների էջ
- «Ատլաս» ՀՀ-նն ըստ մարզերի և Երևան քաղաքի
- Հայաստանի վիճակագրական տարեգիրք
- Վիճակագրական ժողովածուներ
- Վիճակագրական տեղեկագրեր
- Վիճակագրական զեկույցներ
- Տեղեկատվական ամսական զեկույցներ
- Մամուլի հաղորդագրություններ
- Տվյալների բազաներ
- Սոցիալական մեդիա <https://www.facebook.com/armstat.am>

Տվյալների բազաներ

- Արմստատ բանկ

<http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6>

- Արտաքին առևտրի տվյալների բազաներ

<https://www.armstat.am/am/?nid=160>

- Այլ տվյալների բազաներ

<https://www.armstat.am/am/?nid=14>

- Միկրոտվյալներ

<https://www.armstat.am/am/?nid=15>

Միկրոտվյալներ

<https://www.armstat.am/am/?nid=15>

- Տնային տնտեսությունների հետազոտություն
- Մարդահամար և ժողովրդագրություն
- Աշխատանքի շուկա
- Գյուղատնտեսական համատարած հաշվառում

Համաշխարհային Բանկի միկրոտվյալների գրադարան՝ Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն (ILCS), Աշխատուժի հետազոտություն (LFS), Food and Agriculture Microdata (FAM) Cataloge՝ ՀՀ գյուղատնտեսության համատարած հաշվառման 10% անվանագերծված տեղեկատվական բազան



Հայաստանի տվյալները Կայուն Զարգացման Նպատակների ցուցանիշների համար

<http://sdg.armstat.am/am/>





Միջազգային համագործակցություն

Գնահատումները

- 2008թ. տեղի է ունեցել Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից Արմաստաի Գնահատումը, որի արդյունքում 2009թ. հրապարակվել է զեկույց "Հայաստանի Հանրապետություն. ստանդարտների և կանոնների կատարման վերաբերյալ զեկույց - տվյալների մոդուլ, իշխանությունների կողմից պատասխան և մանրամասն գնահատում՝ օգտագործելով տվյալների որակի գնահատման շրջանակը", ԱՄՀ-ի երկրի վերաբերյալ No. 09/50 զեկույց (<http://www.armstat.am/file/doc/99457343.pdf>):
- 2009թ. տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության պաշտոնական վիճակագրության ազգային համակարգի Գլոբալ Գնահատումը: Գնահատումն իրականացվել է Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ), Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի և ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի փորձագետների կողմից (<http://www.armstat.am/file/doc/99457348.pdf>):
- 2014թ. տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի իրականացման թեթև փորձագիտական գնահատումը: Գնահատումն իրականացվել է Եվրոստատի փորձագետների կողմից (<http://www.armstat.am/file/doc/99487953.pdf>):

- 2018թ. իրականացվել է Արմստատի և Հայաստանի պաշտոնական վիճակագրության փորձագիտական գնահատումը: Գնահատումն իրականացվել է Եվրոստատի, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի և Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի փորձագետների կողմից (<http://www.armstat.am/file/doc/99513323.pdf>):
- ՏՏՀՍ շրջանակում ԱՄՀ-ն իրականացնում է ամենամսյա դիտարկումներ և ամենամսյա գնահատում:

Ոլորտային գնահատումները

- 2014թ. Եվրոստատի փորձագետների կողմից իրականացվել է միգրացիայի վիճակագրության ոլորտային գնահատումը Հայաստանի Հանրապետությունում (<http://www.armstat.am/file/doc/99492303.pdf>):
- 2016թ. Եվրոստատի փորձագետների կողմից իրականացվել է գրոսաշրջության վիճակագրության ոլորտային գնահատումը Հայաստանում (<http://www.armstat.am/file/doc/99501893.pdf>):
- 2017թ. Եվրոստատի փորձագետների կողմից իրականացվել է Հայաստանում Աշխատուժի հետազոտության ոլորտային գնահատումը (<http://www.armstat.am/file/doc/99507373.pdf>):

ԵՄ Թվինինգ ծրագրեր

- 2011 - 2013թթ. Արմստատն իրականացրել է «Աջակցություն Հայաստանի վիճակագրությանը Թվինինգ ծրագրի միջոցով» առաջին ԵՄ Թվինինգ Ծրագիրը (<https://www.armstat.am/am/?nid=74>)
- 2015-2017թթ. Արմստատն իրականացրել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - փուլ II» երկրորդ ԵՄ Թվինինգ ծրագիրը (<https://www.armstat.am/am/?nid=76>)



[EU - Armenia Twinning Project on Statistics II](#)

ԵՄ Թվինինգ Ծրագրերի նպատակն էր՝ աջակցել Հայաստանի վիճակագրության արդիականացմանը, ԵՄ չափանիշներին մոտարկված մեթոդաբանությունների ներդրմանը, ԵՄ երկրների հետ ուղղակիորեն համադրելի վիճակագրության թողարկմանը:



ԵՄ Թայերս գործիք

Աշխատանքային հանդիպումներ

- Ծառայությունների վիճակագրություն, 2010թ., ք. Երևան
- Վիճակագրական դասակարգումներ, 2010թ., ք. Երևան

Ուսումնական այցելություններ

- Վիճակագրության համար տարածքային միավորների ընդհանուր դասակարգում (NUTS), 2008թ.
- Տրանսպորտի վիճակագրություն, 2012թ.
- Գների վիճակագրություն, 2013թ.

Փորձագիտական առաքելություններ

- Վիճակագրության համար տարածքային միավորումների ընդհանուր դասակարգում (NUTS), 2008թ.
- Վիճակագրական ենթակառուցվածք (տվյալների անվտանգություն և վիճակագրական գաղտնիություն), 2008թ.
- Կազմակերպական կառուցվածք և կառավարում, 2016թ.
- Գյուղացիական տնտեսությունների ռեգիստրի ստեղծում, 2017թ.
- Վիճակագրական նպատակների համար վարչական տվյալների օգտագործման ԵՄ լավագույն փորձը, 2018թ.



Երիտասարդ վիճակագիրների վերապատրաստում

2017 – 2019թթ. ընթացքում Արմատատի 12 երիտասարդ վիճակագիրներ վերապատրաստվել են Բուլղարիայի ազգային վիճակագրական ինստիտուտում:





Միջազգային համագործակցության ընթացիկ ծրագրեր

- ԵՄ/Փորձաքննություն Ֆրանսիա - Վիճակագրությունը արևելյան գործընկերության միջոցով (STEP)
- Եվրոպական շրջակա միջավայրի գործակալություն - ԵՀՔԳ - ՇՄՄՏՀ (Շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգ) նախագիծ,
- ԵՄ - ԵՄ4էներգետիկա,
- Համաշխարհային Բանկ - ECASAT դրամաշնորհ No. TF0A4543 Ազգային վիճակագրական համակարգի հզորացման Ազգային ռազմավարության ծրագրի իրականացում,
- Համաշխարհային Բանկ - ՀՀ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն,

- Համաշխարհային բանկ - 2017թ. ցուցանիշներով միջազգային գլոբալ համադրումների ծրագիր ԱՊՀ տարածաշրջանում (համակարգող՝ ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտե),
- Համաշխարհային բանկ - Գյուղատնտեսական և գյուղական վիճակագրության կատարելագործման գլոբալ ռազմավարություն ԱՊՀ տարածաշրջանում (համակարգող՝ ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտե),
- Համաշխարհային բանկ - Աշխատանքի վիճակագրության զարգացում ԱՊՀ տարածաշրջանում (համակարգող՝ ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտե),
- ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն/ Բիլ և Մելինդա Գեյթս հիմնադրամ - Գյուղատնտեսական ինտեգրացված հետազոտություն:



Միջազգային դասակարգումներ

CPA/ԱՂԳՏ	Statistical classification of economic activities	Տնտեսական գործնեության տեսակների դասակարգիչ
PRODCOM	Classification of products activities	Արտադրանքի դասակարգիչ ըստ գործնեության տեսակների
ISCO-88	Industrial production statistics introduced of products activities	Արդյունաբերական արտադրանքի դասակարգիչ ըստ գործնեության տեսակների
ISCED	International standard classification of Occupation	Զբաղմունքների դասակարգիչ
HS/CN	International Standard Classification of Education	Կրթության միջազգային ստանդարտ դասակարգիչ
ICD-10	Harmonized Commodity Description and Coding System	Ապրանքների նկարագրման և ծածկագրման ներդաշնակեցված համակարգ
CIS	International Standard Classification of Diseases and related Health Problems	Հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների միջազգային ստանդարտ դասակարգիչ
CCA	Classification of Institutional Sectors	Տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների դասակարգիչ
NUTS	Statistical classification of capital assets	Հիմնական ֆոնդերի դասակարգիչ
COICOP	Nomenclature of Territorial Units for Statistics	Վիճակագրության համար տարածքային միավորների դասակարգիչ
CNFEA	Classification of Individual Consumption According to Purpose	Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչ
ICSE-93	Commodity Nomenclature of Foreign Economic Activity	Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ
ISCLC	International Classification of Status in Employment	Զբաղվածության կարգավիճակի դասակարգիչ
COFOG	International Standard Classification of Labour Cost	Աշխատանքի գնի դասակարգիչ
COPNI	Classification of the functions of government	Պետության գործառնությունների դասակարգիչ
COPP	Classification of the purposes of non-profit institutions serving households	Տնային տնտեսություններին սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների դասակարգիչ ըստ նպատակների
CPC	Classification of the outlays of producers according to purpose	Արտադրողների ծախսերի դասակարգիչ ըստ նպատակների
CPA/ԱՂԳՏ	Central Product Classification	Հիմնական արտադրանքի դասակարգիչ



Միջազգային ստանդարտներ

Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) Տվյալների տարածման հատուկ ստանդարտին (SSՀՍ) 2003թ. նոյեմբերի 7-ից՝ դառնալով այդ ստանդարտին անդամագրված 54-րդ երկիրը:

«...Երկրները, որոնք մասնակցում են Տվյալների տարածման ընդհանուր համակարգին (ԱՄՀ ՏՏՀՀ), կարող են դիտարկվել որպես երկրներ, որոնք պարտավորություն են ստանձնում բարելավել համապատասխան վիճակագրական ցուցանիշների որակը, մինչդեռ Տվյալների տարածման հատուկ ստանդարտին (ԱՄՀ ՏՏՀՍ) մասնակցող երկրները կարող են դիտարկվել որպես ավելի զարգացած վիճակագրական կարողություն ունեցողներ՝ ՏՏՀՀ մասնակցող և ընդհանրապես համակարգին չմասնակցող երկրների համեմատ:»

(Региональное развитие статистики в Азиатско-Тихоокеанском регионе, Записка Генерального Секретаря, пункт 37. ООН, Экономический и Социальный Совет, Статистическая комиссия, 40-ая сессия, 24-27 февраля 2009. документ E/CN.3/2009/15)



Մեթատվյալներ

- Վիճակագրական բառարան <https://www.armstat.am/am/?nid=29>
- Որակի հասկացությունների բառարան <https://www.armstat.am/am/?nid=751>
- Փաստաթղթավորում և որակ

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի **որակի քաղաքականությունը** (հաստատված ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի թիվ 17- ա որոշմամբ <https://www.armstat.am/am/?nid=25>)

Եվրոպական վիճակագրական համակարգի որակի ապահովման շրջանակ <https://www.armstat.am/am/?nid=372>

- Որակի հռչակագրեր <https://www.armstat.am/am/?nid=545>
- Ընդհանուր վիճակագրական բիզնես- գործընթացի մոդել <https://www.armstat.am/am/?nid=373>



Միջազգային մեթոդաբանական ուղեցույցներ և ձեռնարկներ

<https://www.armstat.am/am/?nid=371>

1. Ազգային հաշիվների համակարգ, 1993 ([անգլերեն](#)),
2. Ազգային հաշիվների համակարգ, 2008 ([անգլերեն](#), [ռուսերեն](#))
3. Ապրանքների միջազգային առևտրի վիճակագրություն. հիմնադրույթներ և սահմանումներ, 2010 ([անգլերեն](#), [ռուսերեն](#))
4. Արդյունաբերողների գների ինդեքսի ձեռնարկ, ([անգլերեն](#))
5. Արդյունաբերության վիճակագրության միջազգային ուղեցույց, 2008 ([անգլերեն](#), [ռուսերեն](#))
6. Արտահանման և ներմուծման գների ինդեքսի ձեռնարկ, 2009 ([անգլերեն](#))
7. Ազգային հաշիվներում գների և ծավալների չափման ձեռնարկ, 2001 ([անգլերեն](#))
8. Եռամսյակային ազգային հաշիվներ, 2001 ([անգլերեն](#), [ռուսերեն](#))
9. Եվրոպական հաշիվների համակարգ, 1995 ([անգլերեն](#))
10. Զբոսաշրջության սատելիտային հաշիվ, 2008 ([անգլերեն](#), [ռուսերեն](#))
11. Զբոսաշրջության վիճակագրության միջազգային ուղեցույց, 2008 ([անգլերեն](#), [ռուսերեն](#))
12. Ծառայությունների միջազգային առևտրի վիճակագրության ձեռնարկ, 2004 ([անգլերեն](#), [ռուսերեն](#))
13. Կառավարության ֆինանսների վիճակագրության ձեռնարկ, 2001 ([անգլերեն](#), [ռուսերեն](#))
14. Կառավարության ֆինանսների վիճակագրության ձեռնարկ, 2014 ([անգլերեն](#))
15. Կարճաժամկետ բիզնես վիճակագրության մեթոդաբանություն, 2006 ([անգլերեն](#))
16. Միջազգային միգրացիայի վիճակագրության ուղեցույց, 1998 ([անգլերեն](#), [ռուսերեն](#))

17. Մշտական գներով համախառն ներքին արդյունքի գնահատման մեթոդաբանության կատարելագործման ուղեցույց, 2000 ([ռուսերեն](#))
18. Մշտական գներով համախառն ներքին արդյունքի գնահատման մեթոդաբանության կատարելագործման ուղեցույց, 2005 ([ռուսերեն](#))
19. Չդիտարկվող տնտեսության չափման ուղեցույց, 2002 ([անգլերեն](#), [ռուսերեն](#))
20. Սպառողական գների ինդեքսների հաշվարկման կիրառական ուղեցույց, 2009 ([անգլերեն](#))
21. «Սպառողական գների ինդեքսի ձեռնարկ. տեսություն և կիրառում, 2004» (ԱՄԿ/ԱՄՀ/ՏՀՀԿ/ՄԱԿ ԵՏԽ/Եվրոստատ/ՀԲ) ձեռնարկ ([անգլերեն](#), [ռուսերեն](#))
22. Վճարային հաշվեկշռի ձեռնարկ, 5-րդ խմբ. ([անգլերեն](#))
23. Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումների դիրքի ձեռնարկ, 6-րդ խմբ. ([անգլերեն](#), [ռուսերեն](#))
24. Օտարերկրյա ուղղակի ներդրումների ՏՀՀ ստանդարտ սահմանում, 4-րդ խմբ., 2008 ([անգլերեն](#) , [ռուսերեն](#))
25. «2010թ. մարդահամարների և կացարանների հաշվառման Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի հանձնարարականներ», 2006 ([անգլերեն](#), [ռուսերեն](#))
26. Արտաքին պարտքի վիճակագրություն, Ուղեցույց կազմողների և օգտագործողների համար, 2014 ([անգլերեն](#))
27. Տեղեկատվական տնտեսության վերաբերյալ վիճակագրության արտադրման ուղեցույց, Միավորված Ազգերի առևտրի և զարգացման գծով կոնֆերանս, Միավորված Ազգերի հրապարակում, 2007 ([անգլերեն](#))
28. Մեթոդաբանական նշումներ ինվազիայի վիճակագրության վերաբերյալ
29. Էներգետիկայի վիճակագրության վերաբերյալ ուղեցույց ([անգլերեն](#) , [ռուսերեն](#))
30. Էներգետիկ վիճակագրության վերաբերյալ ձեռնարկ ([անգլերեն](#) , [ռուսերեն](#))
31. Հետազոտության ընտրանքի ուղեցույց ([անգլերեն](#))
32. Գյուղատնտեսական ինտեգրված հետազոտության ձեռնարկ ([անգլերեն](#))



Գրադարան

Արմստատում գործում է բաց գրադարան, որտեղ առկա են Արմստատի բոլոր վիճակագրական արտադրանքները, այլ երկրների և միջազգային կազմակերպությունների վիճակագրական հրապարակումները, մեթոդաբանական ձեռնարկները և դասագրքերը, վիճակագրության ոլորտը կարգավորող ազգային և վերազգային իրավական բնույթի փաստաթղթերը և այլն:

Գրադարանը գործում է՝ երկուշաբթիից - ուրբաթ - 9.00 - 18.00

Հեռախոս: (+ 374 11) 56 03 49

Պաշտոնական կայք՝ <http://www.armstat.am>

Հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0010,

Հանրապետության պողոտա, Կառավարական շենք 3,

ՀՀ վիճակագրական կոմիտե, 731 սեն.

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

0010, Երևան, Հանրապետության պողոտա,
Կառավարական շենք, 3

☎ (+374 11) 52-33-56

Ֆաքս (+374 11) 52-19-21

Էլեկտրոնային փոստ՝ info@armstat.am

ՀՀ ՎԿ կայքեր <http://www.armstat.am>

<http://www.armstatbank.am>

